

“ՕՆԻՐԱ ՔԼԱԲ” ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԱՆՑԻ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ  
ԾՐԱԳԻՐ

“ՕՆԻՐԱ ՔԼԱԲ” ՍՊԸ-ն պետական գրանցում է ստացել 2010 թվականի դեկտեմբերի 29-ին:

Պետական գրանցումից անմիջապես հետո ընկերությունը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի գյուղի Երևան-Աբովյան խճուղի 5 հասցեում նախաձեռնում է ժամանցի և հանգստի ժամանակակից կենտրոնի կառուցում: Այդ նպատակով բանակցություններ են վարվում բազմաթիվ նախագծային ընկերությունների հետ, ընտրվել է “Հ. Ս. ՊՈՌՈ” ՍՊԸ-ն և վերջինիս հետ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պատրաստելու համար պայմանագիր կնքելու հանձնարարություն է տրվել:

“Հ. Ս. ՊՈՌՈ” ՍՊԸ-ի կողմից պատրաստվել է համալիրի նախագծանախահաշվա-յին փաստաթղթերը նշված հասցեի 13,597 հա հողամասի վրա համալիրը կառուցելու համար:

Վայրի աշխարհագրական դիրքը և բոլոր հաշվարկները հավաստում են, որ ներդրումները համալիրում կլինեն արդյունավետ: Համալիրը ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլ նաև տարածաշրջանում կլինի առաջատար դիրքերում, ճարտարապետական ուրույն ոճով, ժամանակակից չափորոշիչների համապատաս-խանությամբ, կնպաստի զբոսաշրջության զարգացմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում կնատուցվեն բարձրակարգ ծառա-յություններ, կապահովի էլ ավելի գրավչություն, հատկապես օտարերկրացիների համար, և արդյունավետ ֆինանսատնտեսական գործունեություն:

Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր:

Ներդրումային ծրագիրը կաշակցի նաև պետության կողմից որդեգրված մարզերի համաչափ զարգացման, աղքատության և արտագաղթի նվազեցման ռազմավարական ծրագրերին:

Ծրագրի իրականացման համար կպահանջվի 45-50 միլիարդ դրամի ներդրում:

#### Ծրագրի համառոտ նկարագիրը

Ծրագրի նպատակն է կառուցել ժամանցի և հանգստի ժամանակակից կենտրոն, որը կապահովի գործունեության նախատեսված տեսակները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության և (կամ) միջազգային պայմանագրերի պահանջները:

Կենտրոնի գույքային համալիրն ըստ նախագծի ներառում է.

1. հյուրանոցի գլխավոր մասնաշենքը,
2. հյուրանոցի մասնաշենքերը,
3. ռեստորանային համալիր,
4. բացօթյա ռեստորանային համալիր և սրճարան,
5. բացօթյա լողավազան,
6. շահումով խաղերի և խաղատան համար նախատեսված մասնաշենք,
7. նպատակային օժանդակ՝ հարակից շինություններ,
8. բարեկարգված, կանաչապատված և հիմնանորոգված տարածք:

#### Ներդրումների հիմնական էտապները

Ներդրումների հիմնական էտապներն են.

1. նախագծային աշխատանքների ամբողջ փաթեթի մշակումը և դրանց համաձայնեցումն իշխանության համապատասխան մարմինների հետ, շինարարության թույլտվության ձեռքբերումը,

2. հողային աշխատանքները,
3. շենքերի և շինությունների կառուցումը,
4. հարակից տարածքների բարեկարգումը:

Ծրագրի իրականացումը նախատեսվում է ավարտել 2013 թվականին, որի ընդհանուր արժեքը նախատեսվում է 45-50 միլիարդ դրամի սահմաններում:

### Ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են.

- մինչև 500 աշխատատեղերի ստեղծումը,
- բարձրորակ ծառայությունների մատուցումը Հայաստանի Հանրապետության բնակչությանը,
- նախադրյալների ստեղծում այլ երկրներից գրոսաշրջիկների ներհոսքի համար:

2010 թվականի դեկտեմբերի 29-ին հրավիրված “ՕՆԻՐԱ ՔԼԱԲ” սամանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ ներդրումային ծրագիրը կազմելու և արդյունավետ իրականացման գործընթացն ապահովելու նպատակով պատասխանատվությունը վերապահվել է “Մուլտի Գրուպ” Կոնցեռն ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Սեդրակ Առուստամյանին և նույն ընկերության ֆինանսական տնօրեն Գեղամ Թովմասյանին:

## ՏԵՂԵԿԱՆՔ

“ՕՆԻՐԱ ՔԼԱԲ” ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
 ԺԱՄԱՆՑԻ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ  
 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն ներդրումային ծրագրի՝ “ՕՆԻՐԱ ՔԼԱԲ” ՍՊԸ-ն 2011 թվականից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի գյուղի Երևան-Աբովյան խճուղի 5 հասցեում 13,597 հա հողամասի վրա, ձեռնարկել է ժամանցի և հանգստի կենտրոնի կառուցումը:

Շինարարական աշխատանքները 2013 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ամբողջովին ավարտվել են և գնահատվել անկախ գնահատող “Էյ Էնդ Էմ ֆայնենշլ Քոնսալթինգ” ՓԲԸ-ի կողմից:

Վերջինիս կողմից, համաձայն հաշվետվության, ընկերության գույքը գնահատվել է 61146139340 դրամ, այդ թվում՝

- շենքերը և շինությունները՝ 59039197608 դրամ,
- հողամասը՝ 1809665732 դրամ,
- շարժական գույքը՝ 300276000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ